# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<04>> փետրվարի 2022թ. N ՄՈ/77-2022

ք. Արմավիր

«ԵՐԱՍԽԱՀՈՒՆԻ ՄԱՐՏԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՆՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N ՄՈ/49-2022 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 69-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319 որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2.1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարողի 2022 թվականի փետրվարի 4-ի զեկուցագիրը և «Երասխահունի Մարտիկ Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Ալինա Գրիգորյանի 2022 թվականի փետրվարի 4-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Երասխահունի Մարտիկ Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի նոր պաշտոնակատար նշանակել Կարինե Մանուկյանին՝ մինչև թափուր պաշտոն առաջանալու հիմքի վերացումը:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2022 թվականի հունվարի 26-ի «Ալինա Գրիգորյանին «Երասխահունի Մարտիկ Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակելու մասին» NՄՈ/49-2022 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 04.02.2022 16:39:28 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505